ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4014/02/24 **ք. Երևան**
7 Հունիսի 2024թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա.Քյուրքչյանի (այսուհետ՝ նաև Դատարան), քննարկելով ըստ հայցի «ԱՐԹԻՆ ԷՆԹՐՓՐԱՅՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Հայցվոր) ընդդեմ «Երևան բժշկագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ պայմանագիրը միակողմանի լուծելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվորի անունից էլեկրոնային համակարգի միջոցով ներկայացված հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, Դատարանին հասանելի է դարձել 25.05.2024թ.:
Դատարանի՝ 30.05.2024թ. «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Ընկերության անունից էլեկտրոնային համակարգի միջոցով կրկին ներկայացվել է

հայցադիմում, որը 03.06.2024թ. մակագրվել է Դատարանին: Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, Դատարանին հասանելի է դարձել 04.06.2024թ.:
Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 121-րդ, 122-րդ, 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԱԼԼԱ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ

Digitally signed by KYURKCHYAN ALLA 8010940461
Date: 2024.06.07 10:44:24 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am